

Մի կալ ի պայքար զիւին ընդ իս խիստ,  
Այլ կոծով տրնիլ մնալ լուռ ինիստ.  
Տուր թեթեւ վաղիւր յամրաքայլ ոտիցս  
Տենչիւ սէր Արփուղջ ի տուն քո մոից.  
Յօդ քո եւ տարափ առաստ յիս յօղեա:  
Մի գոլ պաղագուրկ եւ կալ ի բացեա.  
Այլ ցորչափ զայս միւք եթերաց ծծեմ,  
Անուիկ ծայնիւ ըզբեղ տէր օրոնեմ.  
Փառք յաւերժ անմահ անուան քում Աստուած,  
Որ տաս կար ճգտիլ ուժգին իմ մուաց:

Իիւսնցէ արդ Թագ ինձ աշ Անմահին,  
Կապիսցէ անլոյց ի սէր իւրոյին.  
Անմուռնչ երգել զիմ սրտիս զեղուած  
Համայնից հատին իբր ի հիւս ծաղկանց.  
Յանձուկ վանդակէս զիս հան տէր ի վեր,  
Ճախրել բոյդ շրով հիասքանչ յեթեր:

Փառս եւ զոհութուն եւ զաղերս մուաց  
Միրով քեզ ծօնեմ տէր իմ եւ Աստուած.  
Զի յայս ասպարեց իմ չէ բնաւ կար,  
Շամբ լարիցս հնչել ախորժ կամակար.  
Այլ բոյդ անկապուտ եւ սիրոյդ ճաշակ  
Մարդեալ ետ կշռել բառիցս զումարտակ.

Քաւիչ մեղսանաց բնար սուրբ Հոգւոյն,  
Հովիւ քաղցրասուլ ինձ անոյշ ի բուն.  
Տուր յառաօսուս ի տարիդ ի նուազ,  
Սսխալին զգանի երգել ի հաղագ.  
Հօրըն Անմահի, Որդուոյ Միածնին,  
Ճարտին ճշմարտի երից անքննին.  
Տէր իմ յիս զթաւ եւ ինձ ողորմնա:

ԵՊ. ԽԱ. ՁԱ. Ա. ԱՐ. ՔԵ. ՊԻ. ԿՈ. ՊՈ. ՊՈ.

## ՀԱԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹ ԵՒ ՆՈՑԻՆ ՊԱՐՏԱԿԱՐՈՒԹԻՒՆՔ

•Ո՞չ լուցանեն զժրագ եւ դնեն ընդ դրուանաւ,  
•Ար ասէ եւ ոչ պանէ, փոքր կոչեացի յարքա-  
յութիւն երինից. (Աւետ.)

•Յորժամմատիւս ծառակել Աստուծոյ, պատ-  
րաստին զանձն քո ամենայն փորձութեան.,  
(Սիրար)

Հողի որականութիւն բառը յասուկ նշառ  
նակութիւնից կը պատկանի աշխացիային  
հոգու, և զործքերէ հրաժարուած այն ան-

ձանց, որք առաքինական բաղձանքներով  
և երկնային սուրբ մասածմնակըներով զբաղ-  
ված եւ առ Աստուած առանձնացած են:

Հոգեւորականութեան հետեւղները՝ մեր  
Հայ - ազգի նկատմամբ, զլիսաւորագէս երե-  
քի կարենք բաժանել այսինքն՝ ճգնողական,  
վարդապեսական և քահանացական:

Ճ' գնողականը, որ եւ անսապատական՝ նո-  
քա են, որք միանձնաւոր կենցաղավարու-  
թեամբ՝ աստուածային երանութեանց ժա-  
ռանգութեան խանդակաթ, հեռու բոլորո-  
վին քաղաքական զործքերէ և զբաղմնակը-  
ներէ, լիւանց և այլից խորչելով, կամ իւրիսաց  
համար յատկացեալ անսապատները բնակե-  
լով, մինչև ի մահ ճգնութեամբ և աղօթիւք  
ժամանակ անցունելով, միմիսյն հոգւոյ  
փրկութեան և վերինը խորչելու զբաղած են:

Վարդապետականը որ եւ վանական, թե-  
պէտ և ճգնողականի նման է, բայց սա ունի  
առաւել գերազանց ու վեևմ պաշտօններ և  
պարտաւորութիւններ. և սորա առջեւ ըն-  
դարձակ ասպարէզներ բաց են:

Խակ քահանացականը երկու կերպ պաշ-  
տօն և զբաղմնակներ ունի, այս է հո-  
գեոր և մալմաւոր: Բայց սակայն մելայժմ  
հարկ չկաց երկորովին համար խօսել, հա-  
պա՝ հոգեորին նկատմամբ պէտք է խօսիմք:  
Աւստի կամփուտինք մեր խօսքը, եթէ մեր  
ներկայ յօդուածի մէջ հոգեւորականք ասե-  
լով՝ պէտք է իմանալ վարդապետական և  
քահանացական գառքը:

Ուեպէտ ընդհանուր առմամբ հոգեւորա-  
կան կը կոչենք մի և նոյն նպատակի ծառա-  
յող և հետեւղ անձնները, բայց արժան է  
զիսել, որ սոքա զանազան մեծ և փոքր աս-  
տիճանաց և դասուց որոշուած են, և իւրա-  
քանչեւրը յատկացեալ պաշտօններ և սպա-  
տաւորութիւններ ունին՝ ի միմեանց բարձր

աստիճաննաւ որաց իշխանութեանց սառադարձառուած և ննթարկուած. որոց կարգաւորութիւնը հետեւալ տիտղոսներով կըսարցելին, — գողիք, կիսասարկաւագ, սարկաւագ, քահանաց, վարչապետ, եղիսկովոս և ազքեպիսկոպոս, իսկ սոցա առենեցուն և համայնքաց ազդիս զլուխն է Կաթողիկոսը:

Որքա (հոգեորականք) աղասա լինելով յաշխարհային հոգոց և ի զբազմանց, և իւրիանց անձնական սնունքը և ամեն պէտքը ժողովրդեան յօժարակամ նուերներէ և սուբքերէ ընդունելով, պաշտօնք և պարաւորութիւնք սոցին են՝ միմիայն մուածել և սպասաւորել Ք. քիստոսական Առւրք Եկեղեցւոյ պիտօյից, նորին օրինաց և կանոնաց ջերմեռանդն աւանդապահ լինել, յաշխարհ ամենայն գլորիստոս քարոզել. միով բանիւ Ք. քիստոսական սուրբ կրօնից և հաւատոց ընդհանուր տարածման ու ծառալման և Եկեղեցւոյ հաստատութեան և պայծառութեան հոգւով և մարմնով հսկել:

Եյսպէս եղած է հոգեպատկանութիւնը ճիշդ առաքելական ժամանակներէն սկսեալ և ցարդ նոյնպէս կը յալասահեէ. և նախորդը յաջորդին շարունակաբար աւանդ և պատուեր թողած են և պէտք է թողուն մինչև ի կատարած աշխարհի:

Եյսպէս և Հայաստանիաց Առաքելական Առւրք Եկեղեցւոյ հոգեորականութիւնը՝ ի սկզբնաւորութենէն և ի հիմնադրութենէն՝ աւանդութեամբ ընդունելով կը շարունակէ, թէև ժամանակաց դառն աղեցութեանց և տոխուղական ներգործութեանց պատճառներով աղասա մնացած չէ թեթև փոփոխութիւններէ, սակայն այլոց նկատմամբ ու համեմատութեամբ՝ դարձեալ պարզ և զերազանց է. և երբ երեակայենք այնպիսի դառն ժամանակաց (առաւել միրջին դարուց ակ-

նարկելով) հոգեորականքը, կը տեսնեմք որ իւրիանց պաշտօնը ու պարտաւորութիւնքը սրբութեամբ կատարած դանուելով՝ արգիւնաւոր եղած են. որով և մեծ զրուատեաց և յաւիտանական երախտազիտութեանց և աղջիս աղմանի հանդիսացած են:

Եկատմամբ նախնի և այժման Հայ-Հոգեորականաց, հարկ է ասել, որ արդի հոգեորականաց համար առաւել աշխատութեանց և սրտեռանդն ջանից մեծ ասպարեզներ բացուած են քան զնախնիս. և այնպիսի պարտաւորութեանց ննթարկուած են, զորս կատարելը որբան որ ծանր միանգամայն և փափուկ է, այնքան ևս քաղցր և միիթարական զգայուն և հոգեսեր սրտից համար Եւ ի՞նչ են սոքա, — քնննեմք:

Մեր հոգեորականաց գլխաւորապէս ժամանակիս անհրաժեշտ պահանջմանց համեմատ պարտաւորութիւնքը՝ հետեւալ պարունակութեամբ կը բացասարուին, այսինքն՝ Հայաստանեաց Ա. Եկեղեցւոյ միշտ և յաւիտեան հաստատութեան և պայծառութեան համար տիւ. և զիշեր արթուն հսկողութեամբ ջանալ և ճգնիլ, մինչև անդամ զրհելով բոլոր անհանական հանգստութիւնները, Ա. Եկեղեցւոյ վերաբերեալ ամեն սպասաւորութիւնքը անթիրի կասարել, և ամենայն արարողութեանց և պաշտօնից անփոփոխ կատարման ջերմեռանդութեամբ սպասաւորել, և զայնտ արժանապէս փառաւոր հանդիսացանել. ամեն ժամանակի Ա. Եկեղեցանի կենաց բանը և Աստուածային պատուիրանքն ու օրէնքները քարոզելով, բացասարել ժողովրդեան, զնոսա հոգւոր միսիթարութեանց մատակարարութենէն շըզկելու փոյթ ունենալ. նոցա բարոյականութիւնը մատարական դասախարակութեան լուսով մշտիկել. յաւետ առաքինական բա-

բնապատճել զգացմամբք և արդեամբք ճոխա-  
նալու համոզել թէ յընսանեկան, թէ յաղ-  
գային և թէ ի կրօնական գործառնութիւնա.  
ուսուցանել այն ամեն արդասաբեր խրատ-  
ները այնպիսի դիւրմբանելի եղանակաւ և  
յորդորանոք, որք ժողովրդեան հոգեկան և  
մարմնական պիտոյից համար կարևոր են, և  
նոցա ներկայ և ապագայ երջանկութեանց  
շատիղներ կարող են հորդել և յարդարել,  
որով և ազգի և հայրենեաց և Ա. Եկեղեց-  
ւոյ անձնանուեր և պանձալի անդամներ յա-  
րուցանել. ճանաչել և պատռել տաղ Ա.  
Եկեղեցւոյ ճշմարիտ և արթուն հովիւ-  
քը, զգուշացնել վարձկան կամ լաւ ևս  
է ասել, անողետ և լիսասակազմներէ, որոց  
կակուղ են բանք քան զՃեթ, և ինք-  
եանք որպէս սլաք, ժողովրդեան գառն զիալ-  
ուածոյ կամ արտմութիւն աղջած միջոց-  
ները մսիթարել զնոսա և քաջալերել, ինչ  
պէս կըսառուիրէ Աստուած մարդարեին բե-  
րանովը, "Ոխիթարեցէք, մսիթարեցէք ըզ  
ժողովուրդ իմ..." նա մանաւանդ ժողովը-  
դեան մարմնառոր հոգոց և զբաղմանց մէջ  
ճարտարամիտ ու քաղաքավար ընթայիւք  
օգնել և չժողուլ, որ մոլորամիտ ան-  
ձանց ոտից կոխան լինին, և նոցա ձեռքը  
ծանրանայ բարեպաշտից փրայ ի յուսահա-  
տութիւն, ի թերահաւատութիւն և ի կոր-  
ծանումն գլորման..., միշտ ջանալ ժողո-  
վուրը թշուառ կայութենէ և տղետ վե-  
ճակէ աղտառել ուղեցոյց լինելով նոցա ի  
յառաջաղիմութիւն ի բարին և յօգտա-  
կարն ընդհանըութեան Եղիք. յամենացն  
տեղ և կողմն դալրոցաց հիմնարկութեան և  
արդիւնաւէտ զարգացման հոգ տանել, յի-  
շեցուցանելով նոցա հանասատող՝ թէ երջան-  
կութիւն և փառք ժողովրդեան և պայծա-  
ռութիւն սուրբ հաւատոց մի միացն ուս-

մունքէ և զիտութենէ կախումն ունի. հա-  
մառօտիւ ասելով՝ օրինակաւ անձին ուսու-  
ցանել ժողովրդեան այն ամենայն բարեմաս-  
նութիւնները և առաքինութիւնները և ի  
նոսին յարատելու ջանքին յորդորել, որք  
թէ ըստ հոգւց և թէ ըստ մարմնոյ մսի-  
թարութիւն կընծացնի, և յառաջաղիմու-  
թիւն, փառք ու պարծանք կը պալարերեն  
Եղիքի լրութեան. և բոլորովին զգուշանալ  
այնպիսի վարքերէ և ընթացքներէ, որք  
հակառակ սուրբ հաւատոց և կրօնից լինե-  
լով, կարող են վնասառիթ արդիւնքներ  
ծնանիլ:

Եհաւասիկ այս է այն մեծ ասապարեզը,  
որ Հոգեւորտկանաց առջև ներկայ զա-  
րուս մէջ կը բացուի. որ ամենեցուն ուշա-  
գութեան և արդասաբեր զգացմանց ար-  
ժանի են:

Եւ ըստ որում Երարտուը սրբազնն  
պարտք և պաշտօն համարած է միշտ ան-  
կեղծ հոգեով որ և իցէ վեճակի. և ասաի-  
ճանի մէջ գոսանուողաց առ Եղիք՝ առ Հոյ-  
րինիս և առ Ա. Եկեղեցի Հոյաստանեացց  
ունեցած նուիրական և անհրաժեշտ պար-  
տուորութիւնները իւրաքանչիւրին առան-  
ձին յիշեցնելին զինի, յորդոր կարդալ ամե-  
նեցուն ևս ուստի նկատմամբ յօգուածոյս՝  
իւր յորդորը և առ հարազատ և ջերմեռանդ  
Հոյ - հոգեւորականս ուղղել սրժան կը հա-  
մարի :

Եկատեցէք Հոգեւորտկանք, որ զուք այն  
սուրբ կոչումը ունիք, որ Վրիտասա Տէրն  
մեր անձամբ և օրինակաւ վարդապետալ  
օրինադրեց. և այն անձը որ հոգեւորտկա-  
նութեան սուրբ կոչումը ընդունած է՝ ու-  
րանալով զաշխարհ և իւր անձնական հա-  
ճոյքը՝ երգուեալ առաջի Աստուծոյ և Եկե-  
ղեցւոյ և Եղիքի, ուխտած է նա և Յիտուսի

երինաւոր վարդապետի օրինակին հիտեւելով խաչարարձ այն երկնացին շատիզը ընթանալ՝ սուանց մնուի երկիւղի և գեղեցիկ համարձակութեամբ, որ թէ, և աղաս չէ զրժուարութեանց առապարներէ և բրանաթոր աշխատութիւններէ, բայց լի է բազմապիսի օգուանելով և հասարակաց անձկալի փրկութիւն և եղջանկութիւն կը պողաբերէ:

**Այսօր Հայկական կենաց և Ա. Արօնին յցսը միանգամայն և բարեբաստիկ ապագայն զինուարութէս ձեզ աւանդեալ է:**

Դուք Հոգեւորականք, ամեն անձնական առ օրեայ սակաւապետ պիտոյքը և մնունզը՝ սիրելի Հայ ժողովրդեան մասակարարութեամք միշտ և անպակաս կ'ստանաք:

Բուն Զեր զարդքը և փառքը, Զեր իւրաքանչեւրոց բարի նպատակաց և գործոց յառաջադիմութիւնն ու արզասաւէտ զարդացումն է: Եւ քան զայս զերազանց վարձատրութիւն յերկինս միայն ակնկալել արժան է:

Ուրիմն դուք որ այսպիսի սրբազն պաշտօն և պարաւորութիւն յանձնաւած էք, կը փայելէ ջանալ զայն փառաւորել ըստ արժանւոյն:

Զեր պաշտօնը և պարաւորութիւնը այնքան փափուկ է և այնքան պաշտելի, որոյ ճիշտ կառարումը, ոչ միայն նուիրական պարաւորութեանց մին համարուած է, այլ և սահմողական:

Յիշեցէք հոգեւորականք, որ Հայ աղզը՝ իւր բարոյական կեանքը Զեղի աւանդած է, ուրիմն նորա բարոյական կեանքը կենդանի պահելը՝ ձեր քրտանց և անխոնջ աշխատութեանց արդիւնքն կախումն ունի:

Յիշեցէք, որ Հայ աղզը առ սցմուրիշանի այնքան կարօտութիւն ցոնի, որքան Եղացին մասաւորական կը թութեան և լու-

սաւորութեան: Զեր խրատուց և քարոզից նիւթ առէք այսուհեան. աղգացին դաստիարակութենէ և կրթութենէ, յառաջ եկած օգուանելոր, ժողովրդեան առջեւ գնելով այն գաղափարը, որով վայրենամիտ մարդիկները աշխարհիս վրայ ծամարիս մարդկութեան հեղինակ եղած և իւրեանց մասաւորական աշխատութեամբը երջանիկ են:

Ուրան որ Զեր ժամանակը կը ներէ, Զեր Ճիզը թափեցէք ամենայն տեղ աղգացին ուստումնարան, և ամենայն զիւղ հոգիւոր զբարոցներ պատրաստել, և նոցա հաստատութեան և յարատեւութեանը ջանալ: Այժէ կը կամիք որ Զեր նախնեաց նման՝ Զեր անուանքն ևս անմահանան և երախտազէտ պատից մեջ անջնջելե զրօշմըվին զարուց 'ի զարս, հեռու անձնական շահերէ և անօգուտ հանդատութենէ, հեռու աշխարհացին փայելութեանց բաղձանքներէ, իրրե անձնուրաց և մեռեալ յաշխարհի, բայց կենդանի մի միայն յԱստուած, այս մասին հոգ տարէք: Ուրագէս զի լինիք կատարեալ Հայութեան արժանաւոր Հարք:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ՅՈՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԳԻ

**Մարտ 26. 'Եղր-Նախիջևանց բնակիչ մեծապատիւ Մատթէոս Ելրեցիսիսեանց 50 ուուրլի նուիրած է սուրբ Ելթոռոյս:**

,, — 'Ի Գհէորգէւոլի բնակեալ Պ. Պարպիս Գաապարիան և Ենտօն Մելքոնեան թամբեանց՝ իւրեանց երիվարաց երամակէն՝ մի քանի տարիէ, 'ի վեր շարունակած բարենպատակ ֆերմեուանդութեամբ՝ այս տարի ևս երկու ձիոց փոխարէն զինը 80